Արձանագրության 3

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-19/69 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.07.2019թ.
Ժամը՝ 10:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ա. Հովհաննիսյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. ԵՔ-ԲՄԾՁԲ-19/69 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/69» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ին և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(.Ա. Կիրակոսյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Սարգսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Հովհաննիսյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան